

1.3. Գներ և սակագներ

2000թ. հունվար-հունիսին գների փոփոխություններն,
ըստ հանրապետության տնտեսության առանձին հատվածների

(տոկոսներով նախորդ ամսվա նկատմամբ)

	Սպառողական գների ինդեքս ¹⁾	Արդյունաբերողների արտադրանքի գների ինդեքս ²⁾	Գների ինդեքսը կապիտալ շինարարությունում ³⁾	Բեռնափոխադրումների սակագների ինդեքս ⁴⁾	Գյուղատնտեսական մթերքների իրացման գների ինդեքս ⁵⁾	Գյուղատնտեսության արտադրության միջոցների գնման գների ինդեքս ⁶⁾
Հունվար	101.9	100.1	99.2	97.9	98.9	101.2
Փետրվար	100.1	100.0	100.0	102.1	96.8	99.5
Մարտ	99.6	101.7	101.0	100.1	100.1	96.8
Ապրիլ	99.2	98.5	100.0	100.0	89.6	98.1
Մայիս	99.7	101.3	100.0	100.7	91.4	102.5
Հունիս	99.7	99.0	100.0	100.8	71.9	104.7
2000թ.հունիսը 1999թ. դեկտեմբերի նկատմամբ	100.2	98.4*)	100.2	101.6	82.4*)	108.2*)
2000թ.հունվար-հունիսը 1999թ.հունվար-հունիսի նկատմամբ	99.3	101.1	100.5	99.4	84.2	97.9

*) 2000թ. հունիսի և 1999թ. դեկտեմբերի փաստացի գներով հաշված:

¹⁾ Ըստ գործող մեթոդաբանության, ՀՀ-ում գների դիտարկումը կատարվում է նախորդ ամսվա 21-ից հաշվետու ամսվա 20-ն ընկած ժամանակահատվածում Երևան քաղաքում և հանրապետության 9 մարզերում (բացի Արարատի մարզից) 400 անվանում ապրանք (ծառայություն) - ներկայացուցիչների գծով:

²⁾ Գների դիտարկումը կատարվում է 111 արդյունաբերական բազային կազմակերպություններում՝ 283 անվանում արտադրանք - ներկայացուցիչների գծով:


³⁾ Ըստ ՀՀ քաղաքաշինության նախարարության տվյալների:

⁴⁾ Հաշվարկվում է տրանսպորտի 4 տեսակներով (երկաթուղային, ավտոմոբիլային, օդային և խողովակաշարային)՝ բեռնառաքումների դիտարկված սակագների հիման վրա:

⁵⁾ Ըստ 6000 գյուղացիական և գյուղացիական կոլեկտիվ տնտեսությունների կողմից իրացված 61 անվանում գյուղմթերքների իրացման գների և ծավալների հետազոտման տվյալների:

⁶⁾ Ըստ 6000 գյուղացիական և գյուղացիական կոլեկտիվ տնտեսությունների կողմից 92 անվանում արտադրության միջոցների գնման գների և ծավալների հետազոտման տվյալների:

Գների, սակագների աճի տեմպերը 1999-2000թթ. հունվար-հունիսին, տոկոսներով



Սպառողական գներ: Հայաստանի Հանրապետության սպառողական շուկայում 2000թ. հունիսին, ինչպես նախորդ երեք ամիսներին, արձանագրվել է գների նվազում, ինչը պայմանավորված է պարենային ապրանքների գնային փոփոխությամբ՝ կապված պարենային որոշ ապրանքատեսակների սեզոնայնության, սպառման կառուցվածքի, պահանջարկի և առաջարկի հարաբերակցության փոփոխության հետ:

2000թ. հունիսին նախորդ ամսվա համեմատ սպառողական գների ինդեքսը կազմել է 99.7 տոկոս, այդ թվում պարենային ապրանքներինը (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ)՝ 99.2 տոկոս, ոչ պարենային ապրանքներինը՝ 101.5, ծառայությունների սակագներինը՝ 100.3 տոկոս:

Սպառողական գների ինդեքսը 2000թ. հունիսին 1999թ. դեկտեմբերի համեմատ կազմել է 100.2 տոկոս՝ նախորդ տարվա համապատասխան ժամանակահատվածի 104.3 տոկոսի դիմաց: Նշված ժամանակահատվածում պարենային ապրանքների (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ) գների ինդեքսը կազմել է 99.7 տոկոս, ոչ պարենային ապրանքներինը՝ 101.7, իսկ ծառայությունների սակագներինը՝ 100.9 տոկոս:

2000թ. հունվար-հունիսին սպառողական գների միջին ամսական հավելաճը կազմել է 0.05 տոկոս, ինչը 14 անգամ ցածր է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի միջին ամսական հավելաճից (0.7 տոկոս):


2000թ. հունվար-հունիսին 1999թ. հունվար-հունիսի համեմատ սպառողական գների ինդեքսը կազմել է 99.3 տոկոս, այդ թվում պարենային ապրանքներինը (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ)՝ 97.6 տոկոս, ոչ պարենային ապրանքներինը՝ 103.3, ծառայությունների սակագներինը՝ 101.5 տոկոս, իսկ հունիսին 1999թ. հունիսի համեմատ՝ համապատասխանաբար 98.0 տոկոս, 95.6, 104.9 և 101.3 տոկոս:

Գների միջին ամսական փոփոխությունները 1999-2000թթ., առաջին կիսամյակում ըստ հանրապետության տնտեսության առանձին հատվածների ու ապրանքախմբերի

(տոկոսներով)


	1999 թվական		2000 թվական	
	I եռամսյակ	II եռամսյակ	I եռամսյակ	II եռամսյակ
Սպառողական գների ինդեքս	101.1	100.3	100.5	99.5
այդ թվում՝				
պարենային ապրանքների (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ)	100.5	100.3	100.6	99.3
ոչ պարենային ապրանքների	100.1	99.9	100.3	100.3
ծառայությունների	104.4	100.2	100.1	100.2
Արդյունաբերողների արտադրանքի գների ինդեքս	100.9	98.9	100.6	98.8
Գների ինդեքսը կապիտալ շինարարությունում	101.3	100.1	100.1	100.0
Բեռնափոխադրումների սակագների ինդեքս	99.8	100.1	100.1	100.5
Գյուղատնտեսական մթերքների իրացման գների ինդեքս	97.3	100.7	98.9	94.8
Գյուղատնտեսության արտադրության միջոցների գնման գների ինդեքս	98.6	102.9	98.8	103.8

ՀՀ սպառողական գների ինդեքսի և ԱՄՆ դոլարի նկատմամբ հայկական դրամի հաշվարկային փոխարժեքի փոփոխությունները 1999 - 2000թթ. հունվար-հունիսին տոկոսներով
(նախորդ տարվա դեկտեմբերը = 100)



2000թ. հունիսին նախորդ ամսվա համեմատ սպառողական շուկայում արձանագրված գների 0,3 տոկոս նվազմանը զուգընթաց արտարժույթի շուկայում դիտվել է ԱՄՆ դոլարի նկատմամբ հայկական դրամի հաշվարկային փոխարժեքի 1.8 տոկոս հավելաճ: 2000թ. հունիսին 1999թ. դեկտեմբերի համեմատ սպառողական գների 0.2 տոկոս հավելաճի պայմաններում, հայկական դրամի հաշվարկային փոխարժեքն աճել է 3.7 տոկոսով: 1999թ. համապատասխան ժամանակահատվածում նշված ցուցանիշներն աճել են համապատասխանաբար՝ 4.3 և 5.3 տոկոսով:

ՀՀ սպառողական շուկայում պարենային, ոչ պարենային ապրանքների գների և ծառայությունների սակագների փոփոխությունները 2000թ. հունվար-հունիսին տոկոսներով (նախորդ ամիսը = 100)



Պարենային ապրանքների գներ: Պարենային ապրանքների շուկայում 2000թ. հունիսին, ինչպես և նախորդ երեք ամիսներին, գրանցվել է գների նվազման միտում: Պարենային ապրանքների գների ընդհանուր նվազումը վերջին չորս ամիսներին կազմել է 4.1 տոկոս, այդ թվում մարտին՝ 1.4 տոկոս, ապրիլին՝ 1.5, մայիսին՝ 0.3, հունիսին՝ 0.9 տոկոս: Հետազոտվող 14 կարևոր պարենային ապրանքախմբերից 11-ում նախորդ ամսվա համեմատ հունիսին արձանագրվել է 15.8-0.3 տոկոս գների նվազում: Նվազման համեմատաբար բարձր տոկոս գրանցվել է ձկնամթերքի գծով, ինչը թարմ ձկան (սիգ) գնի 17.9 տոկոսով նվազման արդյունք է:

Բանջարեղենի և կարտոֆիլի ապրանքախմբում արձանագրվել է գների 14.9 տոկոս

նվազում, ինչը պայմանավորված է վարունգի (59.0 տոկոս), լուլիկի (55.5), կանաչ լոբու (19.1), կանաչ պղպեղի (12.5), կարտոֆիլի (2.5 տոկոս) գների նվազմամբ: Դրան զուգընթաց կաղամբի, գլուխ սոխի, սեղանի ճակնդեղի, գազարի գներն աճել են 5.1-22.5 տոկոսով՝ նոր բերքով պայմանավորված:

Մրգի ապրանքախմբում մայիսին նախորդ ամսվա համեմատ արձանագրվել է 27.6 տոկոս գնաճ, ինչը պայմանավորված է խաղողի (56.9 տոկոս), տանձի (34.9), խնձորի (17.2), կիտրոնի (11.6), նարնջի (10.6 տոկոս), ինչպես նաև ծիրանի, դեղձի, սալորի, ձմերուկի, սեխի սեզոնային գնաճով (կապված նոր բերքի հետ): Միաժամանակ 31.3-2.1 տոկոսով նվազել են ելակի, բալի և ադամաթզի գները:

2000թ. հունիսին նախորդ ամսվա համեմատ 3.6-0.3 տոկոսով նվազել են ձվի, կաթնամթերքի, սուրճի, թեյի, կակաոյի, կենդանական և բուսական յուղի, այլ մթերքների, ոչ ոգելից խմիչքի, հրուշակեղենի, մսամթերքի և հացամթերքի գները: Միաժամանակ, ընթացիկ ամսում, ինչպես և նախորդ ամսում, արձանագրվել է շաքարավազի գնաճ՝ կազմելով 8.2 տոկոս (վերջին 2 ամսվա ընդհանուր գնաճը կազմել է 11.2 տոկոս): Հունիսին շաքարավազի գնաճ արձանագրվել է դիտարկված բոլոր բնակավայրերում՝ 3.1-16.1 տոկոսով (համեմատաբար բարձր գնաճ արձանագրվել է ք. Մարտունիում): Երևանում այն կազմել է 8.2 տոկոս:

Ոգելից խմիչքի և ծխախոտի ապրանքախմբում ընթացիկ տարվա հունիսին մայիսի համեմատ գրանցվել է 0.2 տոկոս գների նվազում, ընդ որում ոգելից խմիչքի գները նվազել են 0.6 տոկոսով, իսկ ծխախոտինը՝ 0,1 տոկոսով: Չնայած դրան, 2000թ. հունիսին նախորդ տարվա դեկտեմբերի համեմատ ծխախոտի գծով արձանագրվել է գնաճ՝ կազմելով 4.2 տոկոս:

Գների փոփոխություններն ըստ պարենային առանձին ապրանքախմբերի

	<i>2000 թվական</i>				<i>(տոկոսներով)</i>	
	հունվարը	մարտը	հունիսը	հունիսը	2000թ. հունվար-հունիսը 1999թ.	2000թ. մայիսի նկատմամբ
	1999թ. դեկտեմբերի նկատմամբ			2000թ. մայիսի նկատմամբ		հունվար-հունիսի նկատմամբ
<i>Պարենային ապրանքներ</i> (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ)	102.7	102.0	99.7	99.2	97.6	
<i>Պարենային ապրանքներ</i>	103.0	101.7	98.9	99.1	92.7	
հացամթերք	100.2	99.2	98.3	99.7	97.8	
մսամթերք	100.6	100.2	100.9	99.6	95.8	
ձկնամթերք	94.2	104.9	81.0	84.2	96.8	
կաթնամթերք	100.0	99.5	94.6	97.4	94.1	
ծու	107.6	85.8	79.9	96.4	93.7	
կենդանական և բուսական յուղ	99.9	95.5	92.3	99.1	89.7	
միրգ	121.3	117.1	150.3	127.6	77.6	
բանջարեղեն և կարտոֆիլ	122.7	131.1	100.1	85.1	82.0	
շաքարավազ	97.2	91.4	101.7	108.2	85.8	
սուրճ, թեյ, կակաո	99.7	95.6	92.6	98.5	93.0	
հրուշակեղեն	100.0	98.4	97.5	99.6	96.7	
ոչ ոգելից խմիչք	99.6	99.1	98.5	99.6	98.3	
<i>Ոգելից խմիչք և ծխախոտ</i>	101.0	103.8	103.5	99.8	147.0	

Մի խումբ պարենային ապրանքների գների համեմատությունը տավարի մսի գնի նկատմամբ

(տոկոսներով)

	1999 թվական		2000 թվական	
	հունիս	դեկտեմբեր	մարտ	հունիս
Միս տավարի	100.0	100.0	100.0	100.0
Ձուկ	33.2	38.4	40.1	29.9
Կաթ	18.3	21.2	21.6	19.9
Պանիր	115.2	124.8	122.7	116.5
Կենդանական յուղ	133.6	144.7	137.1	130.0
Բուսական յուղ	55.3	59.2	55.9	52.9
Ձու (տասնյակ)	33.2	43.8	37.3	34.3
Հաց	18.3	20.5	20.3	20.2
Մակարոն	23.8	26.3	25.5	24.4
Վերմիշել	23.9	26.3	25.6	24.4
Շաքարավազ	20.3	21.3	19.4	21.3
Բրինձ	26.4	29.6	29.4	28.9
Աղ	8.5	9.4	9.4	9.2
Կարտոֆիլ	17.7	9.4	10.8	8.7
Խնձոր	45.9	20.8	24.9	29.8
Թեյ	285.2	319.8	304.4	297.5
Սուրճ	226.0	249.9	232.9	227.0

Հաշվարկները ցույց են տալիս, որ 2000թ. հունիսին նախորդ տարվա դեկտեմբերի համեմատ վերը նշված ապրանքատեսակների հիմնական մասի գները տավարի մսի գնի համեմատ (բացառությամբ խնձորի, որի գնաճը կազմել է 9.0 տոկոս) նվազել են 22.9-0.3 տոկոսով, իսկ շաքարավազի գնի մակարդակը նշված ժամանակահատվածում մնացել է անփոփոխ: Ընթացիկ տարվա հունիսին և 1999թ. հունիսին գրանցված գների մակարդակների համեմատությունից ակնհայտ է դառնում, որ տավարի մսի գնի նկատմամբ բերված ապրանքատեսակների գները հիմնականում ունեցել են աճի միտում (դիտարկված 16 ապրանքատեսակներից 11-ի գները աճել են 0.5-12.3 տոկոսով), իսկ ձկան, կենդանական և բուսական յուղի, կարտոֆիլի, խնձորի գծով արժանագրվել է նվազում՝ 16.1-2,4 տոկոսով:

Պարենային մի խումբ ապրանքատեսակների միջին հանրապետական գները 1999-2000թթ.

(դրամով)

	չափի միավորը	1999 թվական		2000 թվական		
		հունիս	դեկտեմբեր	հունվար	մարտ	հունիս
Միս տավարի	կգ	1167	1042	1049	1048	1059
Միս խոզի	կգ	1123	1087	1096	1086	1259
Կենդանական յուղ	կգ	1559	1508	1509	1437	1376
Բուսական յուղ	լ	645	617	618	586	560
Կաթ	լ	214	221	223	226	211
Պանիր	կգ	1344	1300	1302	1286	1234
Շաքարավազ	կգ	237	222	216	203	226
Ձու	տասնյակ	388	456	488	391	363
Հաց (I տեսակի)	կգ	214	214	214	213	213
Աղ	կգ	99	98	98	99	97
Կարտոֆիլ	կգ	207	98	108	113	93
Կաղամբ	կգ	126	50	63	64	56
Գլուխ սոխ	կգ	247	100	111	129	204
Գազար	կգ	289	91	102	111	128
Խնձոր	կգ	536	217	304	261	316
Թեյ	կգ	3328	3332	3340	3190	3150
Սուրճ	կգ	2938	2604	2497	2441	2404

Ոչ պարենային ապրանքների գներ: 2000թ. հունիսին նախորդ ամսվա համեմատ ոչ պարենային ապրանքների 1,5 տոկոս գնաճին մեծապես նպաստել է հանրապետությունում բենզինի գների 14.1 տոկոս հավելաճը՝ հիմնականում պայմանավորված միջազգային (ներմուծման) գների բարձրացմամբ: Հունիսին 1999թ. դեկտեմբերի համեմատ բենզինի ընդհանուր գնաճը կազմել է 30.3 տոկոս, իսկ դիզելային վառելիքինը՝ 2,7 տոկոս:

2000թ. հունիսին մայիսի համեմատ 0.1-4.2 տոկոս գնաճ արձանագրվել է նաև տեքստիլեղենի, շինանյութերի, գրենական պիտույքների, կենցաղային էլեկտրաապրանքների, անձնապիտո ապրանքների, խոհանոցային սպասքի, ոսկերչական իրերի, դեղամիջոցների ապրանքախմբերում:

Միաժամանակ, 6.3-0.3 տոկոս գների նվազում է գրանցվել այգեգործական ապրանքների, մշակույթի ապրանքների, գեղահարդարման, վառելիքի, հագուստի և կտորեղենի, կոշիկեղենի, լվացամիջոցների ապրանքախմբերում, իսկ գորգեղենի, կահույքի գները մնացել են նախորդ ամսվա մակարդակին:

Ոչ պարենային ապրանքների հիմնական ապրանքախմբերի գների փոփոխությունները

	2000 թվական				<i>(տոկոսներով)</i> 2000թ. հունվար-հունիսը 1999թ. հունվար-հունիսի նկատմամբ
	հունվարը 1999թ.	մարտը	հունիսը	հունիսը 2000թ. մայիսի նկատմամբ	
	դեկտեմբերի նկատմամբ				
Ոչ պարենային ապրանքներ այդ թվում՝	99.7	100.8	101.7	101.5	103.3
հագուստ և կտորեղեն	99.5	98.4	96.2	99.0	95.5
վառելիք	100.5	100.3	93.7	98.8	110.6
կահույք	99.1	99.0	99.4	100.0	99.3
գորգեղեն	99.8	99.6	102.5	100.0	99.4
տեքստիլեղեն	99.0	97.9	102.4	104.2	93.0
խոհանոցային սպասք	99.7	99.2	99.7	100.5	97.4
լվացամիջոցներ	100.7	100.5	99.2	99.7	95.0
շինանյութեր	99.9	99.8	103.8	102.2	98.5
այգեգործական ապրանքներ	100.0	100.5	97.6	93.7	99.7
դեղամիջոցներ	99.2	98.9	99.6	100.1	90.2
մշակույթի ապրանքներ	99.6	99.0	95.9	97.2	93.8
գրենական պիտույքներ	98.6	98.5	99.7	101.1	86.6
գեղահարդարման ապրանքներ	98.8	99.0	96.5	98.3	95.7
ոսկերչական ապրանքներ	101.4	100.2	94.4	100.3	93.4
անձնապիտո ապրանքներ	99.0	98.7	101.2	100.7	96.7

Ծառայությունների սակագներ: Ընթացիկ տարվա հունիսին 1999թ. դեկտեմբերի համեմատ բնակչությանը մատուցված ծառայությունների ոլորտում արձանագրվել է սակագների 0,9 տոկոս հավելաճ՝ նախորդ տարվա համապատասխան ժամանակահատվածի 14.8 տոկոս հավելաճի փոխարեն:

2000թ. հունիսին նախորդ ամսվա համեմատ ծառայությունների սակագների 0.3 տոկոս հավելաճը պայմանավորվել է կենցաղային ծառայությունների (0.1 տոկոս), առողջապահության (0.1), կրթության (0.2), կապի (0.5), հանգստի ծառայությունների (0.8), տրանսպորտի (1.5 տոկոս) ծառայությունների սակագների հավելաճով: Հանրային սննդի և մշակույթի ծառայությունների սակագները նվազել են համապատասխանաբար՝ 0.5 և 0.3 տոկոսով, իսկ իրավական և բանկային, բնակարանային-կոմունալ ծառայությունների սակագները մնացել են նախորդ ամսվա սակագների մակարդակին:

Բնակչությանը մատուցված ծառայությունների հիմնական տեսակների սակագների փոփոխությունները

	<i>2000 թվական</i>				(տոկոսներով)
	հունվարը	մարտը	հունիսը	հունիսը	2000թ. հունվար-հունիսը 1999թ. հունվար- հունիսի նկատմամբ
	1999թ. դեկտեմբերի նկատմամբ			2000թ. մայիսի նկատմամբ	
1 առայություններ, ընդամենը	100.2	100.3	100.9	100.3	101.5
<i>այդ թվում՝</i>					
կենցաղային	100.3	100.4	100.9	100.1	100.5
բնակարանային-կոմունալ	100.0	100.0	100.0	100.0	100.0
առողջապահության	102.1	102.1	102.4	100.1	103.8
տրանսպորտի	99.4	99.7	101.8	101.5	100.0
կապի	99.1	99.8	100.5	100.5	98.8
մշակույթի	96.9	99.3	100.1	99.7	105.9
կրթության	100.2	100.5	101.0	100.2	118.4
հանգստի	100.5	101.0	102.0	100.8	95.6
հանրային սննդի	101.6	101.5	101.7	99.5	101.7
իրավական և բանկային	100.0	100.0	100.0	100.0	100.0

Սպառողական գների և ծառայությունների սակագների տարածքային առանձնահատկությունները: 2000թ. հունիսին նախորդ ամսվա համեմատ հանրապետությունում դիտարկվող 10 բնակավայրերից 6-ում արձանագրվել է սպառողական գների 0.1-1.2 տոկոս գնաճ (գնաճի համեմատաբար բարձր տոկոս արձանագրվել է ք. Եղեգնաձորում): Գների նվազում արձանագրվել է Երևանում (0.7տոկոս), Գյումրիում (0.6) և Թալինում (0.6 տոկոս): Հրազդանում (Չարենցավանում) գները, ընդհանուր առմամբ, մնացել են նախորդ ամսվա գների մակարդակին:

Սպառողական գների ինդեքսը 2000թ. հունիսին նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ, ըստ դիտարկվող բնակավայրերի

	<i>1999 թվական</i>			<i>2000 թվական</i>		
	բնակավայրի տեսակարար կշիռը	սպառողական գների ինդեքսը (1999թ. հունիսը 1998թ. դեկտեմբերի նկատմամբ)	միջին ամսական աճը	բնակավայրի տեսակարար կշիռը	սպառողական գների ինդեքսը (2000թ. հունիսը 1999թ. դեկտեմբերի նկատմամբ)	միջին ամսական աճը
Հայաստանի Հանրապետություն, ընդամենը	100.0	104.3	100.7	100.0	100.2	100.05
<i>այդ թվում.</i>						
Երևան	55.34	103.9	100.6	57.36	100.1	100.05
Գյումրի	7.85	101.9	100.3	7.09	100.1	100.05
Վանաձոր	7.49	104.3	100.7	7.33	99.9	99.95
Վաղարշապատ	6.29	103.9	100.6	5.90	101.1	100.2
Թալին	3.02	107.4	101.2	2.92	100.6	100.1
Դիլիջան	3.04	107.1	101.1	3.03	101.5	100.3
Հրազդան, Չարենցավան	7.25	104.9	100.8	6.95	98.0	99.8
Եղեգնաձոր	1.30	105.3	100.9	1.22	103.8	100.6
Մարտունի	5.21	107.2	101.2	5.10	99.7	99.95
Կապան	3.21	106.1	101.0	3.09	102.0	100.3

Պարենային ապրանքների գծով ընթացիկ ամսում դիտարկված բնակավայրերից 5-ում արձանագրվել է գների 1.7-0,2 տոկոս նվազում (նվազման համեմատաբար բարձր տոկոս գրանցվել է Երևանում), իսկ մյուս 5-ում գնաճ՝ 0.4-2.3 տոկոսով (համեմատաբար բարձր գնաճ գրանցվել է ք. Եղեգնաձորում):

Դիտարկված բնակավայրերից 7-ում բանջարեղենի և կարտոֆիլի գները նվազել են 22.2-1.2 տոկոսով (նվազման համեմատաբար բարձր տոկոս արձանագրվել է Երևանում):

Մրգի ապրանքախմբում դիտարկված բոլոր բնակավայրերում գրանցվել է 5.5-38.7 տոկոս գնաճ (համեմատաբար բարձր գնաճ արձանագրվել է ք. Մարտունիում): Երևանում մրգի գինն աճել է 31.6 տոկոսով:

Հանրապետության հետազոտված բնակավայրերում կարևորագույն պարենային ապրանքների միջին գները՝ 2000թ. հունիսի 30-դրությամբ.

(դրամ՝ կգ-ի համար)

	Միս տավարի	Պանիր	Կարագ	Բուսական յուղ, լիտր	Ձուլ, տասնյակի համար	Շաքարավազ	Կարտոֆիլ	Գլուխ սոխ	Կաղամբ	Խնձոր
ԳՅ, ընդամենը այդ թվում՝	1036	1221	1375	553	356	242	90	192	49	170
Երևան	1025	1292	1395	570	350	244	88	180	51	170
Գյումրի	950	1075	1300	527	375	243	77	210	47	150
Վանաձոր	1000	950	1300	540	290	233	97	230	37	250
Վաղարշապատ	1200	1250	1300	500	320	235	80	200	40	120
Թալին	1100	1200	1350	550	350	240	100	200	40	200
Դիլիջան	1100	1200	1400	500	400	240	80	200	50	250
Հրազդան, Չարենցավան	1100	1200	1300	550	400	240	100	200	40	120
Եղեգնաձոր	1050	1100	1350	500	300	240	120	300	90	150
Մարտունի	900	1150	1400	550	400	250	110	200	50	150
Կապան	1160	1100	1640	520	450	246	95	180	80	180

Վերը նշված պարենային ապրանքների ընդհանուր արժեքը (յուրաքանչյուրից 1կգ-ի, ձվի՝ տասնյակի հաշվարկով) 2000թ. հունիսի 30-ի դրությամբ հանրապետությունում միջին հաշվով կազմել է 5285 դրամ, ինչը 4.4 տոկոսով ցածր է նույնամուն ապրանքատեսակների մայիսի 30-ին արձանագրված ընդհանուր արժեքից (5526 դրամ): Նշված ժամանակահատվածում վերը նշված պարենային ապրանքների միջին գները (բացառությամբ շաքարավազի, ինչի գնաճը կազմել է 13.8 տոկոս) նվազել են 51.9-1.6 տոկոսով, իսկ կենդանական յուղի գինը մնացել են նույն մակարդակին: Դիտարկված բնակավայրերում վերոհիշյալ ապրանքների ձեռքբերման ամենացածր արժեքն արձանագրվել է Վանաձորում (4927 դրամ), իսկ ամենաբարձրը՝ Կապանում (5651 դրամ):

Վերը նշված պարենային ապրանքների ընդհանուր արժեքների գծով բոլոր դիտարկված բնակավայրերում արձանագրվել է գների նվազում՝ 7.7-0.2 տոկոսով: Երևանում գները նվազել են 4.1 տոկոսով:

Ոչ պարենային ապրանքների գծով դիտարկված բոլոր բնակավայրերում, բացառությամբ ք. Կապանի, հունիսին մայիսի համեմատ արձանագրվել է գնաճ 1.0-1.9 տոկոսով (գնաճի համեմատաբար բարձր տոկոս արձանագրվել է ք. Վանաձորում): Երևանում գնաճը կազմել է 1.5 տոկոս:

2000թ. հունիսին նախորդ ամսվա համեմատ բնակչությանը մատուցված ծառայությունների ոլորտում դիտարկված բնակավայրերից միայն 3-ում է գրանցվել սակագների նվազում՝ 1.2-0.4 տոկոսով (համեմատաբար բարձր տոկոսով սակագների նվազում արձանագրվել է ք. Մարտունիում), իսկ մյուս բնակավայրերում արձանագրվել է սակագների աճ՝ 0.1-0.6 տոկոսով:

Սպառողական ապրանքների գների և բնակչությանը մատուցված ծառայությունների սակագների ինդեքսը 2000թ. հունիսին 1999թ. դեկտեմբերի համեմատ, ըստ դիտարկված բնակավայրերի և ապրանքախմբերի.

(տոկոսներով)

	Սպառողական գների ինդեքսը	<i>այդ թվում՝</i>				բնակչությանը մատուցված ծառայությունների
		սպառողական ապրանքների	<i>դրանցից</i>			
			պարենային ապրանքների (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ)	պարենային ապրանքների	ոչ պարենային ապրանքների	
ԳՂ, ընդամենը	100.2	100.0	99.7	98.9	101.7	100.9
<i>այդ թվում՝</i>						
Երևան	100.1	99.9	99.6	98.5	101.6	101.3
Գյումրի	100.1	100.2	99.7	99.3	102.4	99.8
Վանաձոր	99.9	99.8	99.2	98.9	102.5	100.6
Վաղարշապատ	101.1	101.2	100.9	101.0	102.2	100.6
Թալին	100.6	100.7	100.8	100.5	100.4	100.0
Դիլիջան	101.5	101.8	101.5	101.5	103.4	100.0
Հրազդան, Չարենցավան	98.0	97.5	97.0	95.5	100.0	100.7
Եղեգնաձոր	103.8	103.9	104.6	105.4	100.7	103.7
Մարտունի	99.7	99.5	98.6	98.7	103.5	101.0
Կապան	102.0	102.5	102.9	102.0	100.6	98.9

Արդյունաբերողների արտադրանքի գների ինդեքս: 2000թ. հունիսին 1999թ. դեկտեմբերի նկատմամբ արդյունաբերական ձեռնարկությունների թողարկած արտադրանքի գները նվազել են 1.6 տոկոսով, նախորդ տարվա համապատասխան ժամակահատվածի 0.3 տոկոս նվազման դիմաց:

2000թ. հունիսին նախորդ ամսվա համեմատ գրանցվել է արդյունաբերական ձեռնարկությունների թողարկած արտադրանքի գների 1.0 տոկոսով նվազում: Վերջինս պայամանավորված է թանկարժեք ու կիսաթանկարժեք իրերի (7.2 տոկոս), էներգետիկայի (1.8), հրատարակչական գործերի (1.6), սննդի (ներառյալ ալյուրի և համակցված կերերի) (0.9) և թեթև (0,3 տոկոս) արդյունաբերությունում թողարկած արտադրանքի գների նվազմամբ: Միաժամանակ գնաճ է արձանագրվել անտառային, փայտամշակման և թղթ-ցելյուլոզի (23.4 տոկոս), գունավոր մետալուրգիայի (1.8), քիմիական, նավթաքիմիական և կենսատեխնոլոգիական (1.7), շինանյութերի (1.4), մեքենաշինության (1.3), ռադիոէլեկտրոնիկայի (1.0 տոկոս) արդյունաբերությունում:


2000թ. հունիսին նախորդ տարվա հունիսի համեմատ արդյունաբերական ձեռնարկությունների թողարկած արտադրանքի գների ինդեքսը կազմել է 96.4 տոկոս:

Բեռնափոխադրումների սակագների ինդեքս*): 2000թ. հունվարին 1999թ. դեկտեմբերի համեմատ ընդհանուր օգտագործման տրանսպորտով բեռնափոխադրումների սակագների ամփոփ ինդեքսը կազմել է 101.6 տոկոս:

Ընթացիկ տարվա հունիսին մայիսի նկատմամբ ընդհանուր օգտագործման տրանսպորտով բեռնափոխադրումների սակագների հավելաճը կազմել է 0,8 տոկոս: Սակագների աճ արձանագրվել է հետազոտվող բոլոր տրանսպորտի տեսակների գծով: Օդային տրանսպորտով բեռնափոխադրումների սակագները հունիսին մայիսի նկատմամբ աճել են 1,5 տոկոսով, երկաթուղային տրանսպորտով՝ 1,1, խողովակաշարային տրանսպորտով՝ 07 և ավտոմոբիլային տրանսպորտով՝ 0,4 տոկոսով:

**) 2000թ. հունվարից ընդհանուր օգտագործման տրանսպորտով բեռնափոխադրումների սակագների ինդեքսի հաշվարկը կատարվում է տրանսպորտի 4 տեսակներով: Երկաթուղային, ավտոմոբիլային, օդային բեռնափոխադրումներից բացի բեռնափոխադրումների սակագների ինդեքսի հաշվարկման համար դիտարկվում է նաև խողովակաշարային բեռնառաքումների սակագները:*

Ընդհանուր օգտագործման տրանսպորտում բեռնափոխադրումների սակագների փոփոխությունները 1999-2000 թթ. հունվար-հունիսին
(Նախորդ տարվա դեկտեմբերը =100)



2000թ. հունիսին նախորդ տարվա հունիսի համեմատ ընդհանուր օգտագործման տրանսպորտով բեռնափոխադրումների սակագները նվազել են 0,2 տոկոսով:

Գյուղատնտեսական մթերքների իրացման և գյուղատնտեսության արտադրության միջոցների գնման գների ինդեքս: 2000թ. հունվար-հունիսին գյուղատնտեսական մթերքների իրացման գների ինդեքսը կազմել է 82.4 տոկոս՝ նախորդ տարվա համապատասխան ժամանակահատվածի 94,2 տոկոսի դիմաց:

Ինչպես և նախորդ երկու ամիսներին, հունիսին մայիսի նկատմամբ գրանցվել է գյուղատնտեսական մթերքների իրացման գների նվազում 28.1 տոկոսով: Գյուղմթերքների իրացման գների նվազում արձանագրվել է իրացման բոլոր ուղիներով՝ մթերող կազմակերպություններին՝ 0.3 տոկոսով, անհատ քաղաքացիներին՝ 27.2 և շուկայում՝ 33.0 տոկոսով:

Հունիսին արձանագրված գյուղմթերքների իրացման գների նվազմանը մեծապես նպաստել է բուսաբուծական մթերքների ոլորտում իրացման գների նվազումը՝ 46.8 տոկոս: Անասնապահական մթերքների իրացման գները նվազել են 3.7 տոկոսով:

Բուսաբուծական մթերքների իրացման գների նվազումը, կապված դրանց սեզոնայնության հետ, հիմնականում պայմանավորված է բանջարեղենի, մրգի, կերային, հացահատիկային մշակաբույսերի ապրանքախմբերում արձանագրված 54.7-0.8 տոկոս նվազմամբ: Միաժամանակ գրանցվել է մեղրի գնաճ՝ 0.3 տոկոսով:


Ընթացիկ ամսում շուկայում և անհատ քաղաքացիներին իրացված բուսաբուծական մթերքները նվազել են համապատասխանաբար՝ 53.1 և 45.9 տոկոսով, իսկ մթերող կազմակերպությունների գծով արձանագրվել է դրանց իրացման գների 7.7 տոկոս գնաճ:

Հանրապետության դիտարկված մարզերից 8-ում 2000թ. հունիսին մայիսի համեմատ գրանցվել է բուսաբուծական մթերքների իրացման 52.0-0.7 տոկոս գների նվազում (համեմատաբար բարձր նվազում արձանագրվել է Արմավիրի և Արարատի մարզերում՝ 52.0 և 41.6 տոկոս), իսկ Տավուշում և Վայոց Ձորում գնաճ՝ 0.5 և 3.2 տոկոսով:

Անասնապահական մթերքների ոլորտում արձանագրվել է գյուղմթերքների իրացման գների նվազման միտում իրացման բոլոր ուղղություններով, ընդ որում մթերող կազմակերպություններին իրացված մթերքների գների ինդեքսը կազմել է 91.7 տոկոս, անհատ քաղաքացիներին՝ 96.1 տոկոս և շուկայում՝ 97.4 տոկոս: Դրան մեծապես նպաստել է կաթնամթերքի (4.7 տոկոս), մսամթերքի (3.5), և ձվի (3.6 տոկոս) ապրանքախմբերում արձանագրված գների նվազումը: Գնաճ արձանագրվել է կաշվեհումքի (9.7 տոկոս) և բրդի (31.3 տոկոս) իրացման գների գծով:

2000թ. հունիսին նախորդ ամսվա համեմատ հանրապետության հետազոտված մարզերից 8-ում արձանագրվել է անասնապահական մթերքների իրացման գների 8.3-0.5 տոկոս նվազում (նվազման համեմատաբար բարձր տոկոս գրանցվել է Լոռիում), իսկ Տավուշում և Վայոց Ձորում՝ 0.4 և 3.6 տոկոս գնաճ:

Գյուղմթերքների իրացման գների ինդեքսը Հայաստանի Հանրապետությունում 2000թ. հունվար-հունիսին ըստ բուսաբուծության և անասնապահության ճյուղերի (նախորդ ամիսը = 100,0)



2000թ. հունիսին՝ 1999թ. հունիսի նկատմամբ գյուղատնտեսական մթերքների իրացման գների ինդեքսը կազմել է 74.6 տոկոս, այդ թվում՝ բուսաբուծությանը՝ 60.8, անասնապահությանը՝ 89.3 տոկոս:

Գյուղատնտեսական մթերքների իրացման գների ինդեքսը Հայաստանի Հանրապետությունում ըստ մարզերի, 2000թ. հունվար-հունիսին

(տոկոսներով)

	2000 թվականի				
	հունվարը	մարտը	հունիսը	հունիսը 2000թ. մայիսի նկատմամբ	հունվար- հունիսը 1999թ. հունվար- հունիսի նկատմամբ
	1999 թվականի դեկտեմբերի նկատմամբ				
Գ, ընդամենը	98.9	96.7	82.4	71.9	84.2
այդ թվում՝					
Արագածոտն	95.1	94.5	95.3	98.9	87.3
Արարատ	109.9	103.4	84.2	58.4	85.0
Արմավիր	96.5	103.9	91.5	48.0	65.1
Գեղարքունիք	109.0	96.0	77.5	92.9	80.3
Լոռի	101.8	101.4	75.8	92.1	93.4
Կոտայք	96.7	90.2	85.0	95.9	91.2
Շիրակ	100.4	97.4	89.7	95.4	86.5
Սյունիք	99.8	99.8	93.1	99.3	95.0
Վայոց Ձոր	98.5	98.7	96.3	103.2	93.3
Տավուշ	100.4	103.2	95.0	100.5	99.2

**Գյուղատնտեսության արտադրության միջոցների գնման գների ինդեքսը Հայաստանի
Հանրապետությունում՝ ըստ մարզերի, 2000թ. հունվար-հունիսին**

(տոկոսներով)

	2000 թվականի				
	հունվարը	մարտը	հունիսը	հունիսը	հունվար- հունիսը
	1999 թվականի դեկտեմբերի նկատմամբ			2000թ. մայիսի նկատմամբ	1999թ. հունվար- հունիսի նկատմամբ
<i>ԴԴ, ընդամենը</i>	101.2	96.6	108.2	104.7	97.9
այդ թվում՝					
Արագածոտն	99.3	101.7	106.0	104.3	96.6
Արարատ	93.4	100.5	103.8	102.9	88.1
Արմավիր	99.6	93.8	110.6	105.5	98.7
Գեղարքունիք	103.3	102.2	106.7	102.8	105.1
Լոռի	105.1	108.2	107.4	108.8	100.2
Կոտայք	100.8	99.2	105.0	106.1	93.0
Շիրակ	100.4	101.8	108.4	104.4	99.6
Սյունիք	100.3	100.9	106.3	100.6	95.8
Վայոց Ձոր	102.2	99.1	111.1	107.9	101.1
Տավուշ	95.8	95.7	103.0	108.4	92.3

2000թ. հունվար-հունիսին արձանագրվել է գյուղատնտեսության արտադրության միջոցների գնման գնաճ 8.2 տոկոսով՝ նախորդ տարվա համապատասխան ժամանակահատվածի 4.4 տոկոսի փոխարեն:

2000թ. հունիսին, ինչպես և մայիսին, գրանցվել է գյուղատնտեսության արտադրության միջոցների գնման գնաճ: Հունիսին մայիսի նկատմամբ գնաճը կազմել է 4.7 տոկոս:

Ընթացիկ ամսում գրանցված գնման գնաճը հիմնականում պայմանավորված է անասունների (13.9 տոկոս), գյուղատնտեսական մանր գործիքների (7.2), պարարտանյութերի (6.6), սերմացուների ու տնկիների (6.5), էներգիայի ու քսայուղերի (5.4), գյուղատնտեսության վճարովի ծառայությունների (3.6), անասնակերի (1.6), մեքենա-սարքավորումների և դրանց պահեստամասերի (1.1տոկոս) գնման գների և սակագների աճով: Միաժամանակ շինանյութերի և պաշտպանության միջոցների ապրանքախմբերում արձանագրվել է 7.4 և 1.3 տոկոս գների նվազում:

2000թ. հունիսին նախորդ ամսվա նկատմամբ, հանրապետության դիտարկված բոլոր մարզերում արձանագրվել է գյուղատնտեսության արտադրության միջոցների գնման 0.6-8.8 տոկոս գնաճ (համեմատաբար բարձր գնաճ գրանցվել է Լոռիում):

2000թ. հունիսին նախորդ տարվա հունիսի նկատմամբ գյուղատնտեսության արտադրության միջոցների գնման գների ինդեքսը կազմել է 106.4 տոկոս: